

զայն, կը պաշտպանենք Եկեղեցւոյ անկախութիւնը, արժանապատուութիւնը եւ ինքնավարութիւնը:

Թէպէտ ժամանակները ծանր են, եւ փորձութիւնները՝ բազում, մենք այստեղ ենք յոյսով, հաւատքով եւ վստահութեամբ: Եկեղեցին միայն մարդկային կառույց չէ. անոր գլուխը Քրիստոս է, եւ Ան երբեք չէ լքած Իր Եկեղեցին: Հետեւաբար, եթէ հաւատարմօրէն մնանք մեր կոչման մէջ, այս ծանր շրջանը կրնայ վերածուիլ հոգեւոր մաքրութեան, նորոգութեան եւ կենդանի վկայութեան ժամանակաշրջանի:

Թող Տէրը լուսաւորէ մեր միտքերը, զօրացնէ մեր սրտերը եւ ուղղէ մեր քայլերը, որպէսզի մեր ծառայութիւնը ըլլայ ի փառս Իր սուրբ անուան, ի շինութիւն եւ ի հաստատութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյ եւ ի փրկութիւն մեր ժողովուրդին:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ

Ողջ օրգանական բնութիւնը կը վկայէ իմաստուն նպատակի գոյութեան մասին եւ կը դիտուի իբրեւ բարձրագոյն բանականութեան արդիւնք... Այսպիսով՝ մարդը կանչուած է տեսնելու, քննութեան առնելու իր բարձրագոյն ընդունակութիւնը՝ մտքի ընդունակութիւնը՝ համապատասխանութեան մէջ ըլլալով էութեան մը հետ, Որուն պարտական է իր գոյութեան համար:

ՅԵՆՍ ՅԱԿՈԲ ԲԵՐՅԵԼԻՈՒՍ

Աշխարհի մէջ գոյութիւն ունեցող համակարգերու կատարելութիւնը, մանաւանդ կենդանիներու զարմանալի յատկութիւններն ու ընդունակութիւնները, ինչպէս նաեւ անոնց կազմութեան հիացմունքի արժանի ներդաշնակութիւնը, դարեր շարունակ պատճառ եղած են, որպէսզի մտածողները ընդունին Աստուծոյ գոյութիւնը:

ՌՈՊԷՐԹ ՊՈՅԼ

Երկնային մարմիններու բազմաքանակութիւնը, գեղեցկութիւնը, կարգաւորութիւնը, բոյսերու եւ կենդանիներու կատարեալ կերտուածքը, ինչպէս նաեւ բնութեան այլեւայլ երեւոյթները խելամիտ, անկանխակալ դիտորդը արդարացիօրէն կը յանգեցնեն Բարձր Գոյի՝ ամենազօր, արդար, բարի Արարչի գոյութեան:

ՌՈՊԷՐԹ ԲՐՈՈՒՆ

Գիտութիւնը Աստուծոյ մասին հարցը կատարելապէս բաց ձգած է: Անոնք, որոնք կ'ըսեն, թէ գիտութիւններու ուսումնասիրութիւնը մարդը ամբողջ կը դարձնէ, յիրաւի՝ ինչ-որ առումով ծիծաղելի են:

ՄԱՔՍ ԲՈՈՆ